

ԲԵԹԴԵՀԵՄԻ ԱԹՏՂԵ\*)

«Խոսանվան եղեցին երկինք

սքանչելեաց քոց, Տէր».

Սագ. 21. 6.

Մեզանից 19 դար առաջ, ինչպէս պատմում է ո. Մատթէոս աւետարանից, արեւելի մի քանի անծանօթ մոդեր երաւանդէմ եկան և իրանց հետ բերին մի զարմանալի լուր, որ բերնէ-բերան անցնելով՝ արագութեամբ տարածուեց քաղաքում և գլուղացրեց ամողջ ազգաբնակութիւնը. ծըս նուած է Մանուկը-Հրէից թափառորը. Աստղալից երկինքը, որ այնքան զարմանահրաշ խորհուրդներ է բովանդակում, նախ սրանց, այս ընտրեալներին է յայտնում մեծ խորհուրդը. Մրտանց հաւատալով իրանց տեսած յայտնութեան, մոգերն աւզզակի գնում են երկրի կառավարչի մօտ և հարցնում. «Որտեղ է Հրէից ծնուած արքան. մենք տեսանք նրա աստղը արեւելում և եկանք նրան երկրապագութիւն տալու»: Հրէից գպիրների խորհրդով Հերովդէս Մեծը նրանց ուղարկում է Բեթղեհէմ, թախանձագին խնդրելով ստոյդ տեղեկութիւններ հաւաքել նորածին. Մանկան մասին, որպէսզի ինքն էլ դնայ և երկրապագութիւն տայ նրան. Թէ ինչ պիտի մինէր ուխտադրուժ, միայն իւր դահի անստահութեան վրայ դողացող արքայի երկրապագութիւնը, դժուար չէ հասկանալ այն բարբարոսավայել կոտորածից, որ նա արաւ, բազմաթիւ մանկանց դիտակներով ծածկելով ամբողջ Հրէաստանը՝ չինայելով մինչև անգամ իւր հարազատ որդուն: Մոդերը գնացին ցոյց տուած ճանապարհով, և ահա այն աստղը, որ նրանք տեսել էին արեւելում, առաջնորդեց նրանց մինչև այնտեղը, որտեղ գտնուում էր Մանուկը: Երկրապագութիւն տալով նրան և թողնելով իրանց բերած ընծաները՝ ոսկի, կնդրուկ և զմուռս, իմաստուն մոգերը վերադառնում են իրանց երկիրը, որտեղից երկնային երկոյթի պատճառով արեւմուտք էին եկել:

\*) «Природа и люди», 1902 г. № 7.

Այս իրազութիւնը, որ այնքան պարզութեամբ և համառօտ հազարդում է ոչ աւետարանիվը, խորհրդաւոր և խոր հետաքրքրութիւն զարթեցնող խորհրդածութիւնների տեղիք է տալիս. Ովքեր էին այս մոգերը, որոնք թողնելով իրանց հայրենիքը, ճանապարհ են ընկնում հեռաւոր արև մաւաք, միայն նրա համար, որ նազարէթցի հիւսան որդուն երկապագութիւն տան: Ի՞նչն էր ստիպում նրանց արքայական պատիւներ տալ նորածին Մանկան, որ այրի անշուք մառքի մէջ դրած էր: Երկինային այն ի՞նչ հրաշալի երեցիթ էր, որ ամենից առաջ հաթանոսներին և օտարերկրացիներին ցոյց տուաւ Փրկչի յայտնութեան մեծ խորհուրդը: Այս բոլորը մինչեւ հիմա էլ անյայտ է մնում, և միայն մուժ, շատ կամ քիչ ճշմարտանման ենթակրութիւններ կարող են, դէմ ամենանուազ չափով, լոյս սփոել քրիստոնէութեան պատմութեան սկզբին կատարուած այս նշանաւոր և հետաքրքրական իրազութեան վրայ: Այստեղ իրար դէմ առ դէմ են դալիս և խաչում իրար հետ խիստ բազմաեսակ աշխարհայեցողութիւններ և հաւատալիքներ՝ աւետարանական պատմութեան եղելութիւնները, հին աշխարհի ստագագուշական հայեացըները, որ ընդհանուր էին թէ հեթանոսների և թէ հրէաների համար, մարգարէններից խոստացուած Մեսիայի գալատեան հաւատը, մարգկութեան սպասողական վիճակը Փրկչի նկատմամբ և, ի վերջոյ, ժամանակակից գիտութեան արդիւնքները: Ուստի զարմանալի չէ, որ ո. Մատթէոսի աւանդած համառօտ պատմութիւնը հին ժամանակիներից սկսած, ինչպէս գիտական հետազոտութեան, այնպէս էլ բազմաթիւ անվաւերական գրուածքների զբաղման առարկայ է եղել: Վերջիններս, հիմնուելով եսայի մարգարէի այն խօսքերի վրայ, թէ «Ազգերը կդիմեն դէպի քո լոյսը և թագաւորները՝ դէպի Քեղ վսայ ծագող փայլը», բացարում են, որ երսւազէմ եկողները երեք թագաւորներ էին՝ Մելքոն ծերը, առնական հասակով Բաղդասարն և Երիտասարդ Գառապարը: Քեօլնի մայր տաճարում մինչև հիմա էլ պահում են աւանդութեամբ Հեղինէ թագուհու գոտած այս երեք մոգերի գանգերը՝ թանգագին քարերով:

գարդարուած արքայական ռսկեայ թագերի մէջ։

Արդ, ի նշ էր այն նշանը, որ մոգերին Աստուածային Մանկան մօտ բերեց։ Մատթէոսի աւետարանի մէջ խօսւում է «աստղի» մասին։ Սա կարող էր իրօք մի աստղ լինել, որ յանկարծակի բռնկուել է երկնքի վրայ. կարող էր մի ուրիշ երկնային հազուագիւտ երևոյթ լինել, ինչպէս օրինակ մոլորակների տարօրինակ հանդիսաւմը. կարող էր նաև գիսաւոր, կամ մինչեւ անդամ վայր ընկնող աստղ լինել։ Սակայն վերջին երկու ենթագրութիւններն իրանը իրանց ջրւում են. մետեօրիտներին, ինչպէս պատահական, թռուցիկ երեսյթներին, հին աստղաբաշխութիւնը ոչ մի լուրջ նշանակութիւն չէր տալիս, իսկ գիսաւորները ամեն աղգի մէջ ամեն ժամանակ համարուել են դժբաղդութեան նշան, որ գուշակում էին պատերազմներ, սով, սրածութիւն, թագաւորի մահ՝ ուստի ոչ մի դէպքում գիսաւորը չէր կարող չը էից թաղաւորի ծնունդը յայտնել։ Այսպիսով մնում են սկզբի երկու ենթագրութիւնները, որոնց հետեղական վերլուծութեամբ և կպարապենք։

Երկնքում նոր աստղի երեալը չպէտք է բացառիկ երեսյթ համարել. աստղաբաշխները մօտ 25 իրական դէպքեր են հաշուել, երբ երկնքի վրայ յանկարծակի մի նոր աստղ է բռնկուել, երբեմն աչքը ծակող սաստիկ պայծառութեամբ, և մի քանի ամիս կամ մի քանի տարի փայլելով, սկսել է աղօտանալ ու վերջապէս բոլորովին անտեսանելի դառնալ. ընդամենը երկու տարի առաջ Պերսէոս տառեղատան մէջ յանկարծակի մի նոր աստղ յայտնուեցաւ, որ մանրակրկիտ հետազոտութեան առարկայ դարձաւ ինչ վերաբերում է այս տարօրինակ երեսյթի պատճառներին, պէտք է ասենք, որ նրանց մասին մեր ունեցած տեղեկութիւնները դեռ շատ և շատ աղքատ են, հէնց այդ երեսյթի բարդ և հաղուադիւտ լինելու պատճառով։ Մի դարում մէկ-երկու անդամ յայտնուող այս տեսակ երեսյթը մարդկային հասկացողութեամբ շատ հազուադէպ է, թէպէտերեւ տիեզերական երեսյթ բաւական յաճախ պէտք է համարուի. Մանաւանդ շատ ժամանակ չի անցել, ինչ գտնուել

է սպեկտրօսկոպը, գիտական վերլուծութեան այս հզօր դործիքը, որը միայն մեզ զբաղեցնող խնդրում՝ ամենամեծ ծառայութիւն կարող է մատուցանել, —ընդամէնը 50 տարի, իսկ այսքան ժամանակուայ ընթացքում միայն 3—4 նոր աստղ են դիտել։ Բայց յամենայն դէպս անկառկածելի է հետեւալը. նոր աստղի երևալը, որ մենք նկատում ենք իբրև փոքրիկ, լուսաւոր կէտի մի խաղաղ, լուս բռնկումն, խակապէս մի ահագին կործանում է, տիեզերական ոյժերի աներեւակայելիքաս, որ տեղի է ունենաւում անծայր աստղաւից աշխարհի հեռաւոր անկիւններից մէկում։ Արդեօք երկու աստղեր—երկու հսկայական արեգակներ—իրանց անսահմատոյտի ժամանակ անասելի արագութեամբ ընդհարուեցան իրար և թագնուած ոյժերը իրանց եռանդը նորից հանդէս բերին շիկացած գազերի պայծառ լոյս արձակելով։ Արդեօք սարսափելի հրդեհ լափեց որեւէ մի արեգակի ջրածնային մթնոլորտը, թէ կիսով չափ սառած մի լուսաւորի բարակ կեղելը անյայտ պատճառից պատռուեց և դարեր շարունակ անվրդով մնացած միջուկից հեղուկ հրային զանդուած դուրս վիժեց մակերեսոյթի վրայ։ Կամ կարելի է մի հանդած արեգակ շրջելու ժամանակ անցաւ կտրեց մետեօրիտների շարքը, յետեւից միլիոնաւոր կրակների բռապէական լոյսը թողնելով, որպէսզի շուտով նորից գիշերային ցուրտ խաւարի մէջ ընկդմուկի։ Այս բոլորը գեռ ևս յայտնի չէ, բայց յիշատակած ենթագրութիւններից ամէն մէկը հաւանական լինելու բաւականաչափ ապացոյցներ ունի։

Նոր աստղերի ամենազարմանալի երկումներից մէկն էր նովա աստղի երևալը կասսիօպէյա համաստեղութեան մէջ հիւսիսային երկնքում, 1572 թ. նոյեմբերի 11-ին։ Այս հազուագէտ երկոյթը նկարագրում է Տիխո Բրագէն, որ առաջինը նկատեց այս աստղը, ուշագրութեամբ հետեւեց նրա փոփոխումներին և ապա թողեց նրա մանրամասն նկարագրութիւնը։ Եւ իրօք, երկոյթը շատ չքեղ ու նշանաւոր էր, անսպասելի հիւրը իւր փայլով նսեմացրեց մնացած բոլոր աստղերը. երկնքի ամենապայծառ աստղը, Սի-

րիուսը, նրանից շատ և շատ ազօտ էր փայլում: Նա մինչեւ անգամ՝ ցերեկով էլ տեսնեռում էր, իսկ գիշերով, երբ ամերի շերտը իրրե թանձր փարագոյք ծածկում էր երկինքը, այս միակ աստղը այնուամենացնիւ ամպերի միջից մշուշածե փայլում էր: Չի կարն լի նկարագրել այն սարսափը, որ առաջ բերեց այս աստղի երևալը այն ժամանակուայ սնոտիապաշտ ժաղարդների մէջ, դա այն օրերն էին, երբ կրօնական պատերազմներ էին մղւում, երբ գեռա և թարմ էր Բարդուղիմեսոսեան գիշերուայ արիւնալի յիշ շատօնիլը, եւ ահա ամէնքը յիշեցին այն աստղը, որ մի ժամանակ Բեթցեհէմում ծագեց, և նոր աստղը ընդունեցին իրեւ մի նշան, որ շուտով երկրորդ գալուստ և ահեղ դատաստան պիտի լինի: Այս սպասողական գրութիւնն ու մշտական ուրսափը ներուպայում ամբողջ  $1\frac{1}{2}$  տարի տևեց, երբ վերոյիշեալ աստղը վերջնականալէս ազօտանալով անցայտացաւ հասարակ աջքի համար, որպէս զի այլիս երբէք չերեայ, կամ, կարելի է, մի քանի դար յետոյ նորից բռնկուի մահուան վերջին շունչը փչելու համար:

Բայց ամենից աւելի նշանաւորն այս դիպուածում այն է, որ երկիւղից կաշկանդուած մարդկային միոքը կազմես թէ աղօտ կերպով ճանաչեց ճշմարտութիւնը, ընդունելով նոր աստղը այն աստղի տեղ, որ մի ժամանակ աւետեց Աստուածային Մանկան ծննդեան մտոին, Դիտական անաչառ հետազոտութիւնը, որ անհամեմատ շատ ուշ կատարուեց, այս մուժ ճանաչողութեանը որոշ չափով, թէև ոչ լրիւ, հաստատութիւն տուեց:

Բանն այն է, որ աստղաբաշխութեան տարեգրութեան մէջ 1264 և 945 թւականներին նշանակուած է նոր աստղի երևալը միևնոյն կասսիօպէյա համաստեղութեան մէջ, և թէպէտ այս երկու աստղերի դեմքը Տիխոյի նկարագրած աստղի պէտ ճշտութեամբ որոշուած չէ, բայց այնուամենայնիւ ամէնից հաւանական է ենթագրել, որ բոլոր երեք Քէպքերումն էլ միևնոյն աստղն է երևացել: Աւրեմն այստեղ դործ ունինք ոչ թէ «նոր» աստղի հետ, այս բառի լրիւ իմաստով, այլ փոփոխական աստղի հետ, որ ողարքերաբար:

իւր լոյսի սաստկութիւնը, ոյժը փոփոխում է՝ երբեմն աւելի պայծառ է փայլում, երբեմն ազօտ, այնպէս որ մինչեւ անդամ՝ բոլորովին անտեսանելի է դառնում. հասարակացքի համար. փայլի այս փոփոխութիւնները շատ կամ քիչ կանոնաւոր տարրերութեան են ենթարկելում: Ճիշտ է, ներկայ դէպքում՝ 300 տարուայ չափ մի շրջան պէտք է ընդունենք, այն ինչ մեզ յայտնի միւս փոփոխական աստղերի լրիւ ցիկլը անհամեմատ աւելի կարճ ժամանակումն է կատարելում՝ մի քանի օրից սկսած մինչեւ մի ամբողջ տարին եւ այս փաստը բաւական ծանրակշիռ կլինէր, եթէ նորերս չյայտնուէր, թէ կան փոփոխական աստղեր, որոնք աւելի երկար շրջաններ ունին, միևնոյն ժամանակ ենթակայ են զգալի տատանումների: Սա II աստղն է Կարին համաստեղութեան մէջ. նա հետզհետէ երկացել է 134 թ. ն. թ. 393, 827, 1203 և 1584 թւականներին թ. յ. այս երեսումների միջև ժամանակամիջոցները տեսում են 522, 434, 376 և 381 տարի. սրանք թէպէտ շատ երկար և անկանոն են թւում, բայց և այնպէս չեն խանգարում աստղի պարբերական շարժման: Յետոյ, 945 և 1264 թուականների մէջ անցել է 319 տարի, իսկ 1264 և 1572-ի մէջ 308 տարի. Երկու շրջանները իրար հաւասար չեն, բայց այս բանը զգալի նշանակութիւն չունի, քանի որ մինչեւ անդամ՝ խօկական փոփոխական աստղերի մէջ պատահում ենք այնպիսիների, որոնք կանոնաւոր պարբերականութեան չեն հետեւում: Դատելով համեմատաբար, այս խոտորումը մինչեւ անդամ չի կարելի զգալի համարել: «Էէտ» համաստեղութեան փոփոխական «Հրաշալի» անուանուած աստղը յաճախ 25 օրով խոտորւում է միջին պարբերականութիւնից, որ 330 օր է տեսում. խոտորումը =  $\frac{1}{45}$ -ի, իսկ մեր ասած դէպքում՝  $\frac{1}{50}$ -ից մեծ չի լինի: Եթէ մեր աստղի երկալու միջին շրջանը ընդունենք 315 տարի, կերեայ, որ այսքան ժամանակամիջոցը երեք անդամ տեղաւորւում է 945 տարիների մէջ և հետեւապէս երեսումներից մէկը պէտք է տեղի ունենար մեր տօմարի 1-ին տարին. հէնց այս երեսումն էլ կարող է յիշատակուած լինել Մատթէոսի աւետարանի մէջ, իբրև

## Բեթղեհեմի աստղը\*

Մեր արծարծած տեսութեան դէմ շատերն առարկել են, մատնացոյց անելով նրա խախուտ լինելը և մի քանի ուրիշ թոյլ կողմեր։ Մի քանի առարկութիւնների մասին հարեանցի յիշեցինք, ցոյց տալով նրանց անզօրութիւնը, ինչպէս օրինակ շրջանի անհաւասարութիւնը և նրա չափազանց երկարաւելութիւնը։ Առարկում են նաև, թէ տեղեկութիւններ չկան այս աստղի երեալու մասին առաջին յայտնուելուց մինչև 945 թւականը. իրօք, այստեղ երկու երեւմ՝ պէտք է եղած լինէր՝ 315 և 630 թւականների մօտերքը։ Բայց մեր ունեցած տեղեկութիւնները երկնային երևոյթների, մանաւանդ այս տեսակ երեսոյթների մասին, այնքան պատահական են, իսկ աստղաբաշխական տարեդրութիւնը այնքան թերի ու կտոր-կտոր, որ նրանց վրայ հիմնուած բացասող ապացոյցները ոչ մի ոյժ չեն կարող ունենալ։ Աւելի նշանակութիւն ունի հետեւալ փասոր. եթէ Բեթղեհեմի աստղը իրօք պարբերական է, ապա ուրեմն երեալով 1572 թւին, պէտք է նորից բռնկուէր 315 տարի յետոյ, այսինքն 1887 թւի մօտերքը, մինչդեռ այս տեսակ բան չպատահեց։ Բայց չէ որ հէնց Միրա—«Հրաշալլ» կոչուած աստղը, որի մասին վերեւում յիշեցինք, յաճախ 95 օրով ուշանում է. եթէ այս գէպքումն էլ այս տեսակ յարաբերական յապաղում թոյլ տանք, այսինքն 315-ի 1/15-ը, կստանանք 24 տարուայ ժամանակամիջոց. ուստի, եթէ աստղը 1887 թւին չերեաց, այդ դեռ ոչինչ չի ապացուցանում. պէտք է սպասենք նրան գէթ մինչև 1911 թուականը. իսկ ի նկատի ունենալով կարիճ համաստեղութեան լ աստղի անկանոնութիւնը՝ մինչև անդամ աւելի երկար կարող ենք սպասել։

Տիսօյի դտած աստղի դիրքը նրա կատարած ուղիղ որոշումների շնորհիւ մեզ լաւ յայտնի է։ Հիմա այնտեղ մշուշապատ կանաչ գոյնով մի փոքրիկ աստղ է երեւում և, շատ կարելի է, իւրաքանչիւր երեք հարիւր տարին մի անգամ մի ինչ որ անհասկանալի պատճառով յանկարծակի կուրացնող պայծառութիւն է ստանում; նսեմացնելով մեր

Երկնքի մնացած բոլոր աստղերը։ Աստղաբաշխութեամբ հետաքրքրուողը երբեմն երբեմն կարող է իւր գիտակը ուզգել երկնքի այս կէտին, որպէսզի այս խօրհրդաւոր աստղի կերպարանափախութեան ոկղքնական զարդացման աստիճանները լաւ տեսնէ։

Այսպիսով մեր ենթագրութեան դէմ բերուած առարշ կութիւնները անզօր են հանդիսանում, և մենք կատարեալ հիմք ունինք նորա վրայ պնդելու, ինչպէս մի շատ հաւանական հիպօթեզի վրայ։ Եթէ այսպէս է, եթէ իրօք Մատթէոսի աւետարանի յիշատակած աստղը այն աստղն է, որ 16 դար անցնելուց յետոյ նորից պայծառութեամբ երեացել է, այն ժամանակ մեր երեակայութեան մէջ հեշտութեամբ կարող ենք կենդանացնել այն սրբազն գիշերուայ պատկերը, երբ ամէնքից ծածուկ ծնուեց Փրկիչը, Աստուծոյ և Մարդոյ Որդին։

Հարաւի հրաշալի երկինքը, իրրե մի վիթխարի մութկապտոյն խօրան՝ լայնարձակ տարածուել էր նիրհող սուրբ երկրի վրայ։ Պարզընկայ գիշերւայ ցուրտ օդում լուռ և հրաշափառապէս պսպղում էին հեռաւոր աստղերը, որոնք իրրե սակեայ խոշոր աւազ սփռուելով երկնակամարի վրայ, գեղեցիկ ու հրաշալի ձևեր և պատկերներ էին գոյացնում. մեր հեռաւոր նախնիքը, որ մեղանից աւելի յաճախ իրանց հայեացը դէպի աստղերն էին ուզգում, շատ լաւ ճանաչում էին այս ձևերը։ Եւ տհա անվրդով և հանդարտ երկնքում, ինչպէս հազարաւոր տարիներ առաջ, յանկարծ բևեռի մօտ լուսաւոր մի նոր կէտ է երեւում, որ աջը կուրացնող պայծառութեամբ փայլում է, նսեմացնելով մնացած անթիւ աստղերի փայլը։ Բարձր և պայծառ փայլում է նա երկնքում՝ քնած, անդէտ և մեղսալից աշխարհի վրայ, հանդիսաւոր կերպով աւետելով «լոյս ի լուսոյ»-ի գալուստը։ Խսկ նոր ծագած արեգակի համեստ ճառագայթների հետ միախառնւում են և հեռաւոր եթերի մէջ հնչուում հրեշտակների ձայնի երանական հնչիւններ։ «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»...

Վերին յիշատակեցինք, որ «աստղ» բառը աւետարանի պատմութեան մէջ ուրիշ խմաստով էլ կարող է դործածուել։ Անկարելի բան չէ, որ իրօք մի աստղ եղած լինէր և վերև առաջ բերած տեսութիւններից հետեւում է, որ այս տեսակի ենթադրութիւնը մինչեւ անգամ շատ հաւանական է։ Բայց նա մեզ չի խանգարում և ուրիշ մեկնութիւն տալ, ըստ որում՝ «աստղ» ասելով առհասարակ երկնային հաղուադէպ երեսոյթ պէտք է հասկանալ։

Հռչակաւոր Կեպլեր 1604 թուին գիտեց երկնքի միենոյն տեղում երեք մոլորակների միաժամանակ հանգիստաման հազուադէպ երեսոյթը (ի հարկ է պերսպեկտիվի մէջ)։ Երեք մոլորակներ, որոնք իրարից ահագին հեռաւորութեան վրայ էին գտնեւում և բոլորովին տարրեր ուղղութեամբ և տարրեր արագութեամբ պտտում, մեր երկրի հետ միասին համարեա մի ուղիղ գծի վրայ շարուեցան (իսկ մեր երկիրն էլ անընդհատ շարժողութեան մէջ է)։ Երկրից դիտելու ժամանակ այս երեք մոլորակները—Հրատը, Լուսընթագն և Երեսակը—երեւում էին կարծես թէ միախառնուած երկնքի մի կէտում։ Զկան համաստեղութեան մէջ։ Այս երեսոյթը ինընըստինքեան չափաղանց հազուադիւտ է, և աւելի նշանաւոր եղաւ այն բանով, որ յանկարծակի նոյն տեղում, Հրատի և Երեսակի միջև, մեր արեգակնային համակարգութիւնից շատ հեռու, բոնկուեց մի պայծառ աստղ։ Իրարից ամեննեին կախումն չունեցող այս չորս երեսոյթները իրանց հրաշալի միաւորութեամբ բոլորովին դարմացրին Կեպլերին, որ ցանկացաւ իմանալ, թէ մոլորակների այս պիսի միաւորութիւնը որքան յաճախ է կատարւում և արդեօք իրանից առաջ այս տեսակ երեսոյթ տեղի չէ ունեցել։ Հաշուում է և բանից դուրս է գալիս, որ այս նոյն մուլրակները իրար հանդիպել են միենայն աստեղատանը Հոռմի հիմնարկութեան 748 թւին, այսինքն Փրկչական թւականից մի քանի տարի առաջ։

Այստեղ մեղ թոյլ ենք տալիս նիւթից փոքր ինչ շեղուել, Փրկչի ծննդեան թուականը ճիշտ որոշելու համար, Մեր տաշեղութիւնը սկսում ենք Փրկչի ծնունդից, որ այդ հաշուով

տեղի պէտք է ունեցած լինէր Հռոմի հիմնարկութեան 753 թւին, բայց այս հաշիւը, որ սկսուել է Դիոնիսիոս Փոքրից, միայն ենթադրութիւն է՝ մօտաւոր ճշտութեամբ, մինչ Փրկչի ծննդեան խակական թուականը մինչև այժմ անյայտ է մնում: Պատմական գանազան տեղեկութիւններ միաբերան վկայում են, որ Յիսուս Քրիստոս ծնուած է 753 թուից մի քանի տարի առաջ: Մեղ հաստատ յայտնի է հետեւեալը. Հերովդէս Մեծը, որի մահից յետոյ ու ընտանիքը եղիպատոսից հայրենիք վերադարձաւ, մեռել է 750 թուին, իսկ որովհետեւ Յիսուս ծնուեց դեռ ևս այս թագաւորի կենդանութեան օրով, պարզ է, որ նա 750 թւից ոչ թէ յետոյ, այլ առաջ պիտի ծնուած լինի: Պատմական մի քանի ուրիշ իրողութիւններ մեզ ստիպում են Փրկչի ծննդեան թուականը մի քանի տարով յետ տանել՝ մինչև Հռոմի հիմնարկութեան 748 թուականը:

Նորից վերադառնալով նախկին հարցին, նկատենք, որ երեք մոլորակների զարմանալի միացումը պատահած կլինի այդպիսով Փրկչի ծննդեան առաջին տարին: Ուստի շատ հաւանական է, որ հէնց այս երեսոյթը երկնային նշան ընդունեց, որ դրդեց արեերի մոգերին Փրկչի օրօրօցի մօտ գալու: Լուսնթագի, Երեակի և Հրատի—արքայական մեծութեան, ճակատագրի զօրութեան և յաղթութեան այս երեք սիմվոլների—տարօրինակ հանդիպումը Զկան կենդանակերպի մէջ, որ աստղագուշակութեամբ կապուած է Իսրայէլի պատմութեան հետ, մոգերին տեղիք տուեց ենթագրելու, որ այդ երկրում թագաւոր պիտի ծնուած լինի. Սա իւր խոնարհութեան մեծութեամբ կյաղթէր աշխարհին և մարդկութեան պատմութեան ապագայ ընթացքի վրայ ամենամեծ ազդեցութիւն կունենար:

Ահա այն բոլորը, ինչ որ ժամանակակից գիտութիւնը կարող է ասել Փրկչի ծննդեան ժամանակ պատահած այս նշանաւոր երեսոյթի մասին: Ճիշտ է, դեռ հիմա էլ, 19 դար յետոյ, շատ բան անորոշ և անբացատրելի է և խորհուրդը շատ բանում առաջուայ պէս խորհուրդ է մնում. բայց ինչպէս ընթերցողը տեսնում է, գիտական ճգրիտ

վերլուծութիւնը, ամենեին չհակասելով աւետարանական պատմութեանը, կարողացել է գոնէ մասամբ այս մուլֆ հարցը պարզել, որ մեր սրտին շատ մօտ է:

Թարգմ. Յ. Գր.



### Դարձեալ Զուարքնոց Եկեղեցին.

Թէպէտ Արարատի նախընթաց համարներում լոյս տեսած Գեր. Յուսիկ եպիսկոպոսի յօդուածը բաղմակողմանի կերպով և ցանկալի մանրամասնութեամբ պարզաբանում է, Զուարթնոց եկեղեցու պեղումներին վերաբերեալ զրոյցներն ու թիւրիմացութիւները, բայց խնդրի կարեռութիւնը հարկադրում է միքանի գիտողութիւններ ևս մեր կողմից աւելացնել, մանաւանդ որ այդ յօդուածում ի միջի այլոց քըննութեան են ենթարկուել մեր կարծիքները:

Այն հարցը, թէ արդեօք կարող է Զուարթնոց եկեղեցին ա. Լուսաւորչի հիմնած Մայր տաճարը լինել, կամ խոկական ա. Էջմիածինն այժմեան Զուարթնոց եկեղեցու աւելախների տեղում շինուած լինել՝ արդեն փակուած պէտք է համարենք: Յիրաւի նոյն ոռու թղթակիցներից մկր, որոնց մասին միշում է Յուսիկ Սրբազնն, լսել է իրը Տ. Խաչիկ վարդապետի բերանից, թէ նորա ձեռքում հին հին վաւելադրիք կան, և դոցա հիմնան վերայ ոչ միայն հարցը զներ այլ և հաստատել կարելի է. բայց յայտնի է արդեն, որ ինքը Հ. Խաչիկ, վախանակ խոր հրդաւոր վաւերազրերը հանգեստ թերելու, հրապարակական հերցու մովանհեթեթութիւն, անուանեց բոլոր այդպիսի զրոյցները: Նոցանով զբաղուել ներելի կլինի այսուհետեւ ու բեմն այն ժամանակ միայն, երբ իրօք հրապարակ ենեն շնուած ու շաւենուած վաւերագրերը, որոնք կախարդական զօրութիւն ունին անհեթութիւններին կարգութիւն դարձնելու: